ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ի
ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
2024-2025 ՈՒՍ ՏԱՐՎԱ I ԿԻՍԱՄՅԱԿԻ

2024-2025 ուս տարում իրականացվել են կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատուի աշխատանքային պլանով նախատեսված բոլոր աշխատանքները՝ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում ուսանողներին և շրջանավարտներին, խորհրդատվության իրականացում, ուղղորդման աշխատանքների կատարում, աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցակցության բարձրացման նպաստում, մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտման աջակցում:

2024-2025 ուս տարում (սեպտեմբեր-դեկտեմբեր) համագործակցել ենք 47 գործատու կազմակերպությունների հետ:

2024-2025 ուս տարում (սեպտեմբեր-դեկտեմբեր) անցկացվել են անհատական խորհրդատվություններ թվով 61 ուսանողների հետ:

2023-2024 ուս. տարվա շրջանավարտներից աշխատում են թվով 22 ուսանող, որից 7 ուսանող իրենց մասագիտությամբ, իսկ 15 ուսանող ոչ իրենց մասնագիտությամբ:

2024-2025 ուս տարում (սեպտեմբեր-դեկտեմբեր) ունեցել ենք տարբեր համագործակցություններ հասարակական կազմակերպությունների հետ:

Սեպտեմբերի 18 – Այցելություն GTC (Գյումրու Տեխնոլոգիական Կենտրոն) «Ինժեներական մասնագիտացում» ծրագրի բացմանը: Ծրագրի շրջանակներում քննարկվել են ինժեներական կրթության կարևորությունը և դրա առաջընթացը Գյումրիում:

Սեպտեմբերի 20 – Հյուրընկալություն «Տեխնո-կրթական ակադեմիայի» ներկայացուցիչներին: Կազմակերպվել է սեմինար «Ծրագրավորման լեզուներ» թեմայով, որտեղ մասնակիցները ծանոթացել են ծրագրավորման լեզուների ընտրությանը, կիրառմանը և զարգացող միտումներին:

Հոկտեմբերի 31 – Այցելություն «Միասին» հիմնադրամ: Ուսանողները վարպետի օգնությամբ պատրաստել են «Մաֆֆինի» թխվածք: Այս այցը հնարավորություն տվեց մասնակիցներին ձեռք բերել խոհարարական հմտություններ և սովորել կուլինարիայի տարբեր տեխնիկաներ:

Նոյեմբերի 8 – Այցելություն Գյումրիի «Թումո» կենտրոն: Այցի ընթացքում ուսանողները ծանոթացել են ստեղծարար տեխնոլոգիաների, ծրագրավորման և արվեստի ոլորտում իրականացվող ծրագրերին:

Նոյեմբերի 25 – Այցելություն «Նոր լույս» հասարակական կազմակերպություն: Կազմակերպվել է սեմինար «Անձի ինքնաբացահայտում» թեմայով, որի ընթացքում մասնակիցները քննարկել են անձնական զարգացման հարցեր, ինքնաճանաչման գործընթացը և ինքնաբավության հասնելու ուղիները:

Դեկտեմբերի 2 – Այցելություն Գյումրու տեխնոլոգիական կենտրոն: Կազմակերպվել է շրջայց, որի ընթացքում ուսանողները ստացել են տեղեկատվություն անվճար կարճաժամկետ դասընթացների մասին և քննարկվել են կրթության հնարավորությունները Գյումրիում:

Դեկտեմբերի 10 – Կամոյի միջնակարգ դպրոցի 8, 9 և 10-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպվել է մասնագիտական կողմնորոշում, որի նպատակն էր օգնել աշակերտներին ընտրելու ապագա մասնագիտությունը:

Դեկտեմբերի 17 – Այցելություն «ԵԳԱՆՅԱՆ» լեզուների դպրոց: Կազմակերպվել է «Լեզուների դերը մարդու կյանքում» թեմայով սեմինար-դասընթաց, որտեղ մասնակիցները քննարկել են լեզվաբառարանների ստեղծման, լեզվաբառապաշարային հարստացման և լեզվաբառաբառացիության հարցեր:

Դեկտեմբերի 20 – Հյուրընկալություն «Երիտասարդնեիր տուն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչին: Կազմակերպվել է «Ոչ խոսքային հաղորդակցություն» թեմայով սեմինար, որի ընթացքում ուսանողները ուսումնասիրել են ժեստերի, դիմախաղի և մարմնաբառի կարևորությունը հաղորդակցության մեջ:

Ուսանողների հետ կազմակերպվել են 37 բազմաբնույթ սեմինար դասընթացներ, որոնց ընթացքում ուսանողները ծանոթացել են աշխատաշուկայի պահանջարկին, գործատուներին ներկայանալու փափուկ հմտություններին, ՈՒԹՀՌ վերլուծությանը և այլ թեմաների:

Ուսանողների հետ այցելել ենք տարբեր մասնագիտական վայրեր, զրուցել գործատուների հետ:

Ստորև ներկայացված են կարիերայի կենտրոնի կողմից իրականացված սեմինար դասընթացների թեմաները.

1. Ուսանողներին կարիերայի կենտրոնի գործառույթների ներկայացում
2. Ուսանողների իրավունքները ու պարտականությունները
3. Անձի SWOT վերլուծություն
4. Ծրագրավորման լեզուներ
5. Ինքնակենսագրություն
6. Շարունակական/հարատև կրթություն
7. Աշխատող գործատու փոխհարաբերություններ, իրավունք և պարտականություն
8. Արդյունավետ թիմի ստեղծում
9. Ժամանակի կառավարում
10. Մոտիվացիա
11. Էմոցիոնալ ինտելեկտ
12. Գործատուին ներկայանալու հմտություններ
13. Խորհուրդներ առաջին անգամ աշխատանքի ընդունվողին
14. Անձի ինքնաբացահայտում
15. Անձի մոտիվացիայի ձևավորում աշխատանքի նկատմամբ
16. Բիզնես գաղափարների ստեղծում
17. Լեզուների դերը մարդու կյանքում և աշխատաշուկայում
18. Ոչ խոսքային հաղորդակցություն

Վերապատրաստումներ

1.Նոյեմբերի 6-ին Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմին անվցկացվել է վերապարաստում «Դեռահասների հետ աշխատանքի հոգեբանական առանձնահատկությունները» թեմայով:

2. 2024թ. դեկտեմբերի 12-13-ը ՀՀ, Աղվերան

Վերապատրաստող կողմը

«Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» CRRC հիմնադրամի հետ համատեղ «Հայաստանի մարզաբնակ երիտասարդների զբաղվածության և տնտեսական հնարավորությունների բացահայտում»

Վերապատրաստման նպատակը

Աջակցել Հայաստանի մարզերում երիտասարդների բարեկեցությանը և ներուժի զարգացմանը՝ բարելավված կրթական հնարավորությունների, սահուն անցումը դեպի աշխատաշուկա ապահովելու և ձեռներեցության խթանման միջոցով:

Վերապատրաստման ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները՝

- Աշխատաշուկայի վիճակագրության և վերլուծության ներածություն
- Աշխատաշուկայի տվյալների և վիճակագրության մեկնաբանություն
- Աշխատաշուկայի զարգացման միտումների կանխատեսում
- Զբաղվածության միտումների վերլուծություն
- Աշխատաշուկայի քաղաքականություն և միջամտություններ
- Բաց տվյալների և վերլուծական գործիքների կիրառում

Կատարող՝ կարիերայի ուղղորդման կենտրոնի պատասխանատու Կ. Ղարագյոզյան